№ 57 Մարտի 4 (16) 1880 Մարտի 4 (16) № 57

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի կես տարվանը 6 բուբլի
Առանձին համարները 5 կոպեկով։

Թերթը լույս է տեսնում ամեն օր, բացի կիրակի և տոն օրերից։

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)

Գայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Գայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ։

Տարեկան գինը 10 բուբլի կես տարվանը 6 բուբլի
Առանձին համարները 5 կոպեկով։

Թերթը լույս է տեսնում ամեն օր։

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)

Գայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Գայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ։

Redakcija „Mšakn"

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի նկատողութիւն ռուս մամուլին։—Ներքին տեսութիւն։ Նամակ Արմենակից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիա։ Նամակ Թիւրքիայից։—Լուսաբերներ։—«Մշակի» հեռագիրներ։—Գայտարարութիւններ։—Բառասիրական խնդիր։

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԻՆ

Թէպէտ շատերը Ռուսաստանի արտաքին չարակամներից համոզմունք են յայտնում թէ մեր տերութեան մէջ չը կայ տագրական խօսքի այժ և հասարակական կարծիք եւրոպական մրոքով, բայց թշնամական զգացմունքով կուրացածները, եթէ կարողանային հէնց մի ժամ իրանց ազատ պահել մոլեռանդ նախապաշարմունքից, այն ժամանակ գուցէ շատ հեշտութեամբ կը հրաժարվէին իրանց ընդունած կարծիքից։ Այն ժամանակ գուցէ հեշտութեամբ կը ճանաչէին թէ մի այնպիսի երկրում, որը բնակված է ազգերի և ցեղերի ամենախառնիճաղանճ պէսպէսութիւններով, շատ առատ այժ և յաղթութիւն է մի լրագրի համար վայելել այնչափ համակրութիւն և համարում ընդհանրութեան կողմից, ինչպէս վայելում է իւրաքանչիւրը ռուսաց առաջնակարգ պարբերական օրգաններից, քան թէ մի մեծ սիրադործութիւն է ազդեցութիւն ստանալ այնպիսի երկրում, որը բաղկացած է միացեալ և միալեզու ազգերից, ինչպէս շատերը եւրոպական պետութիւններից։ Սակայն չը նայելով ազգագրական պայմանների մի այսչափ մեծ տարբերութեան, դարձեալ իւրաքանչիւրը յայտնի օրգաններից մեր ընդհանուր տերութեան մէջ ունի անշուշտ զօրեղ ազդեցութիւն մտքերի վրա և իր պատասխանատու մասը ընդհանուր հարցերի ձևակերպութեան և որոշման մէջ։

Ինչպէս փայլուն ապացոյց մեր խօսքերի, կարող ենք ցոյց տալ «Голосъ» լրագրի վրա, որը միաձայն հեղինակաւոր է և յարգված պետութեան բոլոր ազգերի մէջ, և Ֆինլանդիայում, և Լեհաստանում, և Կովկասում և Բարալից դէն։ Այդչափ մի հսկայական յաջողութեամբ «Голосъ»-ի հարկէ նոյնչափ պարտական է իր առատ և մենդարար բովանդակութեան, որչափ և նորա ընտրած խոհեմ ընթացքին և խելացի բազաքականութեան։ Ռուսաստանի շահերը հաշտեցնելով զանազան հպատակ ազգերի անհատական կարիքների հետ, հայրենասիրական գաղափարը միացնելով փոքր ազգութիւնների ուղղութեան և հակումների հետ, «Голосъ»-ը կարողացել է ոչ միայն մեր տերութեան մէջ ապրող բոլոր ազգերի լիակատար համակրութիւնը գրաւել, այլ կարողացել է տարածել իր ազդեցութիւնը նաև Ռուսաստանի սահմանից դուրս, սիրով հնչեցնել տալով իր անունը երեք միլիոն տաճկահայոց մեծամասնութեան լեզվում։

Այսպիսի յայտնի և ակնառու հասարակական ուղեցոյցների հետ միասին կան Ռուսաստանում մի հարկէ և այնպիսիները, որոնց ուղղութիւնը նոյնչափ նեղ է և միակողմանի, որչափ նոցա ազդեցութիւնը նուազ և անունը քիչ ընդհանրացած։ Այս տեսակների թւում, ըստ մեծի մասին, երեւում են պատկերազարդ պարբերական թերթերը, որոնք ցաւակցարար պիտի ասած, չեն կարողացել հասնել մինչև հիմայ ոչ բաւարար տեխնիկական կատարելագործման և ոչ էլ ուրիշ պատշաճաւոր լրագրական արժանաւորութիւնների։

Չունենալով բնաւ գիտաւորութիւն մի երկու տողերում ներկայացնել նոցա մանրախոյզ քննութիւնը, մենք մատնացոյց կը լինենք միայն մի աչքի ընկնող իրողութեան վրա, որը նոյնչափ աննշան է զարգացած կարդացողի և փոքրաթիւ շջանի աչքում, որչափ և նշանաւոր է ընդհանրութեան և չափաւորապէս զարգացած պետութեան բոլոր ազգերի մէջ։ և Ֆինլանդիայում, և Լեհաստանում, և Կովկասում և Բարալից դէն։ Այդչափ մի հսկայական յաջողութեամբ «Голосъ»-ի հարկէ նոյնչափ պարտական է իր առատ և մենդարար բովանդակութեան, որչափ և նորա ընտրած խոհեմ ընթացքին և խելացի բազաքականութեան։ Ռուսաստանի շահերը հաշտեցնելով զանազան հպատակ ազգերի անհատական կարիքների հետ, հայրենասիրական գաղափարը միացնելով փոքր ազգութիւնների ուղղութեան և հակումների հետ, «Голосъ»-ը կարողացել է ոչ միայն մեր տերութեան մէջ ապրող բոլոր ազգերի լիակատար համակրութիւնը գրաւել, այլ կարողացել է տարածել իր ազդեցութիւնը նաև Ռուսաստանի սահմանից դուրս, սիրով հնչեցնել տալով իր անունը երեք միլիոն տաճկահայոց մեծամասնութեան լեզվում։

Այսպիսի յայտնի և ակնառու

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

ԻԴ.

Թուրքաց կառավարութեան կողմից պատերազմական պատրաստութիւնների նշանները արդէն նկատելի կերպով երևում էին։ Եւ այդ կարելի էր տեսնել առաւելապէս Բագրեւանդի գաւառում, որ շատ հեռու չէր ռուսաց սահմանից։ Գիւղացիներից խստութեամբ հաւաքում էին ոչ միայն ներկայ տարվայ հարկերը, այլ և պահանջում էին նրա ապառիկները և մի քանի ապագայ տարիների հարկերը միասին։ Ամողջի հաւաքածներին և զգոնութեանը չափ չը կար։ Ով որ փոքրով վնասվել չէր կարողանում, բռնութեամբ վճարել էին տալի նրա տան կայքը, անասունները, և մինչև անգամ չէին խնայում եղներին ու զոմէներին, որոնք անհրաժեշտ էին գիւղացու երկրագործութեանը, որոնք ծառայում էին նրա վարը վարելու և ծանրութիւնները տեղափոխելու համար։ Այդ բաներն չէր, գիւղացիների վրա պարտք էին դնում պատրաստել այրման հազար հոխոյ բաղմոմամ, և կամ խլում էին ոներից իրանց ուտելու համար պատրաստած բոլոր պաշարեղէնները, որպէս էին ձաւար, կորկոտ, բլխմա *), իւղ, պանիր, բրինձ և այլն։ Գիւղացիների բոլոր արտասուքի, լացի և աղաղակների պատասխանը լինում էր այն, թէ «աւելութիւնը պատերազմ ունի»...

Այնչեայ անկարգութիւնները բաց արին Թոմաս էֆէնդու առջև գործունէութեան մի նոր և ընդարձակ ասպարէզ։ Որպէս արդէնի մուլթէզիմ, նա յանձն էր առել հաւաքել հարկերը և հոգալ զորքերի համար պատրաստվելիք պաշարի մի մասը։ Թոմաս էֆէնդու առջևը դրած էր մի լայնատարած հունձք, ուր նրա սուր մանգաղը նամանով գործում էր...Այժմ փոխանակ երկու զոփթիների, նա ստացել էր իշխանութիւնից բույրուլթու (открытый листъ) պահելու իր մօտ որքան պէտք լինի զոփթիներ։

Եւ այդ բոլոր գրգռումները հասնում էին հայերին միայն, որովհետև մահմետականները պատրաստվում էին մասնակցել պատերազմին և նրանցից ուրիշ ոչինչ չէր պահանջվում։

Բացի նրանից, որ հայ գիւղացիները կողոպտվում էին և իրանց 10—20 տարիների ընթացքում ձեռք բերած կայքերից մինչդամայն զրկվում էին,—բացի այդ դաւն չքաւորութիւնից, նրանց տիրել էր մի ընդհանուր սարսափ, նրանց սպառնում էր մի ընդհանուր և ուժեղ սոսկալի անբախտութիւն։ Մահմետական տարրի մէջ նկատվում էր մի զգալային կատաղութիւն դէպի քրիստոնեանները, դէպի բոլոր «գաւուրները»։ Ամենի բերանից լսելի էր լինում այն գժոխային բառը՝ «գէաւր»։ Մոլլաները, մուֆթիները, զոռիները և չէյիները բորբոքում էին խառնիճաղանճ ամբոխի մոլեռանդութիւնը, զրգռում էին նրան, քարոզելով, թէ պատերազմը կրօնական է, թէ Սատանայում չուտով պիտի բարձրանեն «սանջակ չէրիֆը», և չուտով կը տրատարկվի սրբազան պատերազմը, և ամողջ իսլամը պէտք է սուր բարձրացնէ քրիստոնեաների դէմ....

Այդ բոլորը մեծ հոգեր պատճառեցին պ. Սալմանին, որին լաւ յայտնի էր այդ կատաղի չարժումների նշանակութիւնը և նրանց սարսափելի հետևանքը անվային հայերի վերաբերութեամբ։

—Շուտով կը կրկվին այստեղ Բօլգարիայի կոտորածները, ասաց նա մի առաւօտ վարդանին,—պէտք է չտալիս նախապատրաստել ժողովուրդը անձնապաշտպանութեան համար։

—Ես էլ մի այսպիսի բարբարութեան հոտը զգում եմ...պատասխանեց վարդանը։

Այսպէս խօսելով, նրանք գուրս եկան ծերունի խաչօր անից և դիմում էին դէպի տէր Մարուքի տունը, որի հետ մտք ունէին վերջացնել գպրոցների վերաբերութեամբ մի քանի օր առաջ կարգադրված խորհուրդը, այսինքն, որպէս վարդանը ասաց, ուզում էին տէրտերի երեսին մի փոքր իւղ քսել, որ նա լուն, և նրա փեսայ տիրացու Սիմոնին վարձել այժմ որպէս հսկող բանտարների վրա, իսկ ապագայի համար խոստանալ մի պաշտօն նոր բացուելիք գպրոցների մէջ։

Նրանց ճանապարհին զարկեց մի ձայն. գիւղի միջով անց էր կենում մի անծանօթ չարչի, և իր վաճառքների անունները մի առ մի կարդալով, գընդակներ էր դրանում։

—Միրուն աղջիկներ, կարմիր հարներ, ինձ բերեցէք ձեր փարաներ, ես կը տամ ձեզ լաւ առեղներ, գոն-գոն թելեր, ասկի մասոցներ....

Զարչին մի վիթխարի մարդ էր, ոտքից ցոլուս հագնված ցնցոտիների մէջ։ Նրա վաճառքների ապրանքը ակը, որ կրած ունէր թիկունքի վրա, համեմատելով նրա մարմնի մեծութեանը, նոյն տպաւորութիւնն էր գործում, որպէս մի փոքրիկ մաղ քարշ տված լինէր ուղտի կողքից։ Զարչին ձախ ոտքից սոսկալի կաղում էր, և ամեն անգամ, երբ օրօրվում էր նա դէպի ձախ կողմը, կարելի էր մտածել, որ իսկոյն ցած կը գլորվի այդ Գոլիաթը, բայց ձեռքի ասկին գաւազանը նեցուկ տալով, պահպանում էր իր իրանի հաւասարակշռութիւնը։

Պ. Սալմանը, լսելով նրա ձայնը, կարծես, մի երկաթական ցնցում զգաց իր սրտի մէջ, կարծես, աշխարհի բոլոր բերկրութիւնները միանգամից լցվին նրա հոգին։ Ինչ կայ կար պ. Սալմանի և այդ թափառականի մէջ։ Զարչին դեռ չարունակում էր եղանակել իր վաճառքների անունները և ծանր, անհաւասար քայլերով անցնում էր գիւղի նեղ փողոցների միջով։ Պ. Սալմանը անցաւ նրա մտից և երկու օտարականների հայացքներ հանդիպեցին միմեանց։ Նրանց մէջ ամենին խօսակցութիւն չեղաւ, բայց հաղորդեցին միմեանց շատ բան....Վարդանը ոչինչ չը նկատեց։

—Լաւ ժամանակ է գալ դա էլ իր թեկն ու ասեղը ծախելու, խեղճ գիւղացիների մօտ մի փարայ էլ չի մնացել, ինչով պիտի առնեն, ասաց վարդանը ծիծաղելով, երբ փոքր ինչ հեռացել էին չարչու մօտից։

—Նրա արկղը, սիրելիս, ձեռնածուների արկղիկի նման երկու յատակ ունի, պատասխանեց պ. Սալմանը,—ստորին յատակի մէջ գտնվում են այնպիսի մթերքներ, որոնց սպառելու այժմ ամենայարմար ժամանակն է....

Վարդանը մի առանձին ուշադրութիւն չը դարձրեց այդ խորհրդաւոր խօսքերի վրա. նրա միտքը նոյն բանի զբաղված էր մի բոլորովին այլ առարկայով։ Նա մտածում էր Լալայի վրա։ Խրոշի յանկարծակի փոփոխութիւնը, շրջապատող խրոովութիւնները սատակ անհանգստացնում էին նրան, և չը գիտէր, թէ ինչպէս պէտք էր անօրինել իր Լալայի վիճակը, որտեղ թաղցնել նրան, ինչ անել նրա հետ, երբ ինքը այսօր կամ էգուց ստիպված կը լիներ ընդունել մի բոլորովին այլ ձեռնարկութիւն....

—Լաւ ասեցիր, գոն-գոն թելեր, սիրուն յուլուններ...հեռուից կրկին լսելի եղաւ կաղ չարչու խռպոտ և ձգական ձայնը։

Այդ միջոցին գիւղի մէջ հանդիպեցաւ պ. Սալմանին և վարդանին Թոմաս էֆէնդին։ Նրա մօտ կանգնեցրել էին իր գեղցիկ ձին, որի վրա պատրաստվում էր նստել։ Նա շրջապատված էր մի խումբ գիւղացիներով, որոնց զանազան հրամաններ և պատուէրներ էր տալիս։ Ցնծալով պ. Սալմանին և վարդանին, նա բաժանվեցաւ խումբից, և իր սովորական դիւական ժպիտը երեսին, դիմեց դէպի երկու երիտասարդները, և գեռ չը հասած, ասաց հեռուից.

—Լաւ ձեզ վաղուց էի ցանկանում տեսնել, պ. Դուզուկէնան, (նա գեռ չը գիտէր պ. Սալմանի իսկական անունը)—ախ, որքան բախտաւոր եմ համարում ինձ, սիրելի հարևանկից, որ ահիթ ուենցայ տեսնել ձեզ։ Դաբ, երեի, չը գիտէք, որ ես էլ պրոտեցի եմ։

Պ. Սալմանին ոչ միայն չափազանց զարմանալի, այլ շատ զզուելի թւեցաւ էֆէնդու այս տեսակ

---

*) Բլիթայ վերմիչելի նման պատրաստած մի խմորեղէն է։

գացած մեծամասնութեան համար։ Օրինակ, աչքի անցնելով ռուսական մի քանի պատկերազարդ և անպատկեր թերթերի մէջ տպված կենսագրական մանրամասնութիւնները այն մեծանուն մարդի, որի վրա է ուղղած այժմ ամբողջ Ռուսաստանի աչքը և յոյսը, ոչ մինի մէջ այդ թերթերից մենք չը կարողացանք նկատել գոնէ մի խօսք այդ անձի ազգային ծագման մասին, որով անշուշտ կարող է պարծենալ ոչ թէ մի փոքրիկ հին ազգ, ինչպէս Հայոցն է, այլ և իւրաքանչիւր մեծ ազգութիւն։ Այդ մարդը մեր նախնեաց արիւնը կրող և նոցա տարածողը ժառանգող կոմս Լորիս-Մէլիքովն է, որի մասին այնչափ գովասանք և ըղձալիմանք յայտնելու ժամանակ, ոչ մինը ռուս լրագիրներից մի խօսքով անգամ չը յիշեց թէ ո՞ր ազգութեան է պատկանում Ռուսաստանի այժմեան ընդհանուր սիրոյ և յուսոյ նշանակը։ Մի մարդ, որի երեսը Ռուսաստանի հորիզոնում ասել տուաւ իր համար դեռ պատմութեան մէջ ոչ մինի համար չասված խօսքեր. ex oriente lux, միթէ բիչ խրախոյս և բարի նախանձ կը յարուցանէր իր և միւս ազգութիւնների մէջ, եթէ նորա անհատական արժանաւորութիւնների հէնց մի կտորը վերաբերվէր և այն ազգին, որը եօթը տասնեակ տարվայ մէջ տուել է Ռուսաստանին մի ամբողջ դաս երեւելի մարդիկների, որոնցից իւրաքանչիւրը նոյնպէս իրաւունք է ունեցել ասել տալու, մանաւանդ պատերազմական ասպարիզում. ex oriente lux։ Մեր կարծիքով երկուսից մէկը. կամ հարկաւոր է հետևել ճիշդ կոսմոպոլիտական սկզբունքներին և մասնաւոր մարդկանց յատկութիւնները բնաւ երբէք չը տարածել ընդհանրութեան վրա, կամ թէ հակառակ դէպքում, հարկաւոր է ունենալ այնչափ տակտ, որ արժանաւորութիւններով յատկանշվելու ժամանակ գոնէ հէնց մի խօսքով յիշել և այն ազգութիւնը, որի հետ անշուշտ կապված է յատկանշութեան առարկան իր բոլոր անհատական բարձր նշաններով։

Իսկ եթէ յարգելի ռուս լրագիրները. ինչպէս Нива, Новое Время և այլն չը գիտեն կոմս Լորիս-Մէլիքովի ծագումը, թող նոքա դիմեն իւրաքանչիւր օտարազգի և սահմանից դուրս հրատարակվող լրագիրներին, որոնք շատ լաւ գիտեն այդ...

Գր. Նիկողոսեան

չողոքորթութիւնը, որին ամենին չէր ճանաչում, որի հետ առաջին անգամ էր տեսնվում։ Նա ոչինչ չը պատասխանեց։ Լիֆենդին բռնելով նրա ձեռքը, ասաց.

—Ցոյս ունեմ, որ դուք իրաւունք կը տաք համբուրվել ձեզ հետ, որպէս պրլսեցի, եւ թոյլ եմ տալիս այդ խնդրել ձեզանից։ Հայրենիքիս երկար տարիների կարօտը ցանկանում եմ ձեզանից առնել։

Վարդանը, հեռու կանգնած, լուռ նայում էր այդ կամգրիայի վրա։ Պ. Սալմանը չը գիտէր, թէ ինչպէս պէտք էր դուրս գալ իր նեղ դրութիւնից։ Այժմ Լիֆենդին դարձաւ դէպի Վարդանը.

—Մա՞ռ եկ, իմ խենթ բարեկամ, դու գիտես, որ ես երեխայի սիրտ ունեմ, մի բոպէ կը բարկանամ, միւս բոպէում կը մոռանամ բոլորը։ «Գնուրդը իր թանին թիմա՞ չի ասիս։ Դու էլի իմն ես, թէ լաւ, թէ վատ, իմն ես։ Ես ամեն ինչ մոռացել եմ։ Ցուցէ՛ ինձ ձեռ քդ։

Վարդանը հազիւ կարողացաւ զսպել իր բարկութիւնը։ Բայց մտածելով, որ Լիֆենդու այդ բարեկամական արտայայտութիւնները առանց՞մի առանձին նպատակի չէին լինելու, ծռտեցաւ նրան և ձեռք տուեց։

Նա կրկին դարձաւ դէպի պ. Սալմանը։

—Ես խիստ բարկացած եմ ձեր դէմ, պ. Դուզուկիան, ասաց նա իր խօսքերին աւելի լուրջ ձեւ տալով,—լսել էք թուրքի առածը՝ ռասնուտերի հետ առաջ տեսնվիր, յետոյ գլուզը կոզոպտիրս։ Թոմաս Լիֆենդին այդ երկրում մի մարդ է, եթէ դուք պէտք էք ինձ հետ խորհուրդ արած լինէք, ես ձեր բոլոր դիտաւորութիւնը այնպէս կը կ՚բացարէի, որ այսօր այս անհարժութիւնները չէին պատահի ձեզ։ Ա՛խ, ջանկներ, ջանկներ, լաւ սիրտ ունէք, բայց գործելու եղանակը չէք իմանում։ Ուղիղ չեմ ասում։

—Ես, իրաւ, չեմ հասկանում, թէ դուք ինչ բանի վրա էք խօսում, պատասխանեց պ. Սալմանը։

Լիֆենդին այնպէս ձևացրուց, որպէս թէ չը լսեց պ. Սալմանի խօսքերը, և երեսը չուռ տալով դէպի գիւղացիների խումբը, որոնք հեռու կանգնած ապասում էին նրան, ասաց.

—Ա՛խ, ասանակներ, ասանակներ, դուք երբ պիտի խելքի գաք։—Նա կրկին դառնալով դէպի պ. Սալմանը, շարունակեց.—Մարդ էլ իր ձեռքով իր աչքի լոյսը կը խաւարացնէ, դրանք (գիւղացիները) այդպէս են։ Ես այսօր լսեցի, ճչմարիտն ասեմ ձեզ, մաղերս բիզբիզ կանգնեցան։ Մենք աշխատում ենք, որ դրանք զարգ ունենան, ուսում առնեն, աչքերը բացվի, կոյր չը մնան, աշխարհի չարն ու բարին ճանաչեն, բայց դրանք չեն հասկանում, էլի իրանց «էշն են քշում»...

«Մենք աշխատում ենք»... կրկնեց իր մտքում պ. Սալմանը, բայց ովքեր են այդ «մենքը», որ առանձին կերպով չեշտուց Թոմաս Լիֆենդին։

Նա շարունակեց.

—Ես հոգով չափ ուրախացայ, երբ լսեցի ձեր դիտաւորութիւնների մասին, պ. Դուզուկիան, և այս պատճառով դիմեցի ձեզ յայտնելու իմ առանձին շնորհակալութիւնը։ Մեր ժողովուրդը խաւարի մէջն է. պէտք է դուրս բերել նրան դէպի լոյս աշխարհ։ Դպրոցը միայն կը փրկէ նրան։ Մի քանի օր առաջ պատահած անկարգութիւնները թող չը վնասեցնեն ձեզ. ամեն բարի գործի սկիզբը դառնութիւնքա է լինում։ Դուք իմ մէջ, որպէս ձեր հարեւանցի մէջ, կը գտնէք համակրութիւն և ձեռնտուութիւն։ Ընդունեցէք իմ փոքրիկ ծառայութիւնները։ Ես այսօր մի գործով գնում եմ մերձակայ գիւղը, առաւօտեան կը վերադառնամ, և ինքս անձամբ կը կանչեմ, բայց անել կը տամ գպրոցների հիմքը։ Այսուհետ ոչ ոք չի դանվի, որ Թոմաս Լիֆենդուն ընդդիմութիւն գործէ։

—Շնորհակալ եմ, Լիֆենդի, պատասխանեց պ. Սալմանը,—դուք այնքան շատ զրամունքներ ունէք, որ ես չէի ցանկանայ խլել ձեր թանգագին ժամանակը։

—Այդ ոչինչ, ասաց կատպատուն մի առանձին բաւականութեամբ,—բարի գործի համար ես միշտ ժամանակ ունեմ։

Նա ձեռք տուեց երկու երիտասարդներին և հեռացաւ։

—Լիրը... խարերայ... ասաց նրա ետևից Վարդանը։

—Կարելի է օգուտ քաղել այս տեսակ մարդերից, պատասխանեց պ. Սալմանը։

—Միթէ հաւատում էք նրա խօսքերին։ Ով գիտէ, ինչ սատանայական նպատակներ ունի։

Երկու երիտասարդները արդէն հասել էին տէր Մարտիքի տանը և ծեռում էին դուռը։

—Սիրուն ասեցիր... գոյն-գոյն թերթ... լաւ յուլուներ... լսելի եղաւ կաղ չարչու ձայնը, որ անց էր կենում միւս փողոցից։

—Վարդան, թողնենք այսօր տէրտէրի մօտ զընալը, ասաց նրան պ. Սալմանը։

—Ինչու, հարցրեց Վարդանը։

—Ինձ պէտք այդ չարչուց մի քանի բաներ զընել...

Վարդանը սկսեց ծիծաղել իր ընկերի անտեղի ցանկութեան վրա։

—Եկէք, ուրիշ բան կա՞... ասաց նրան պ. Սալմանը, այնպիսի մի եղանակով, որ Վարդանը չէր կարող կասկածել նրա առաջարկութեան կարևորութեան վրա։

Երկու երիտասարդները թողեցին տէրտէրի տունը, անցան միւս փողոցը և հեռուից սկսեցին հետևել չարչուն։ Նրա ետևից ընկած էին մի խումբ գիւղական երեխաներ և գոռում էին.—Մեզ մատաք տուր, մատաք տուր։ Նա հանեց մի կոտր մատաք և բաժանեց երեխաներին։

—Ես այդ մարդուն մի չարաթ առաջ տեսայ, այսպէս մաս էր գալի վանայ գիւղորայքում, ասաց մի գիւղացի իր մօտ կանգնած հարևանին։

—Այդ չարչիները ամեն տեղ թափառում են, պատասխանեց հարևանը,—բայց ինչ սարսափելի դէմք ունի, հայիր, Գրիգոր, ես չէի ցանկանայ դրան գիշերով տեսնել, կարծես, չար սատանայ լինի։

Կաղ չարչին պտտելով բոլոր փողոցները, երբեմն կանգնում էին նրան այս և այն տունը մի բան գնելու և ամբողջ ժամերով պառում էին, իսկ երբեմն հէնց փողոցի վրա բաց էին անել տուին նրա արկղը, և գիւղացի կիներները հաւաքված նրա չուրջը, երկար ու բարակ բազար էին անում։ Այսպէս, մինչև երեկոյ նա հազիւ կարողացաւ վերջացնել իր առևտուրը, և մուքը պառել էր արդէն, երբ դուրս եկաւ գիւղից։ Նա թողեց ուղիղ ճանապարհը, որ տանում էր դէպի հարևան գիւղը, և սկսեց գիմել դէպի մի խրամ, որ բաւական խորն էր ընկած գարնան հեղեղներից, իսկ այժմ ցամաքել էր։ Նրա ընթացքի մէջ այժմ կարելի էր տեսնել մի նոր փոփոխութիւն. քայլերը դանդաղ էին որպէս առաջ, որովհետև, ինչպէս երևում էր, չալված արկղը սաստիկ ծանր էր։ Բայց այդ մարդը ամենին կաղ չէր, թէև ցեղեկով այնպէս էր ձևացնում։ Նա սկսեց իջնել խրամի մէջ։ Այնտեղ ցած դրեց իր բեռը, և ձախ ձեռքի երկու մատը շրթունքի վրա դնելով, խորհրդաւոր ձայնով մի քանի անգամ չ՚ացրուց։ (Զեռքի մնացած մատները կտրած էին)։ Քանի բոպէից յետոյ խրամի մէջ յայտնվեցան Վարդանը և պ. Սալմանը։ Վերջինը գրկեց չարչիին և երկար չէին բաժանվում միմեանցից։

—Հիմա նստենք, ասաց պ. Սալմանը,—պատմիր, լաւ առևտուր ունեցար...

—Շատ լաւ... պատասխանեց չարչին ուրախ ձայնով։—Վասպուրականի մեծ մասը հեղեղցի իմ վաճառքներով...

—Ի հարկէ, առանց փողի...

—Առանց փողի... ես իմ վաճառքները ձրի էի բաժանում...

Վարդանը ապշած լսում էր երկու բարեկամների խօսակցութիւնը և ոչինչ չէր հասկանում։

—Հիմա հասկանում ես, ասաց նրան պ. Սալմանը,—որ իմ բարեկամի արկղը ձեռնածուի արկղիկի նման երկու յատակ ունի։

—Հնազանդիր է գիտենալ, թէ ֆոկուսի գլխաւոր յատակի մէջ ինչ էր թաքցրած, հարցրեց Վարդանը։

—Ցէ՛նքեր...

Վարդանը այժմ հասկացաւ. չարչու ով և ինչ մարդ լինելը, որովհետև մի քանի օր առաջ նրա մասին լսել էր պ. Սալմանից, և ինքը նոյնպէս գրկեց նրան։

Այդ մարդը Մէլիք-Մանասուն էր։

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՐՄԵԱՆՍԿՈՅ

—

Մարտի 6-ին

Ցեղիս հայ երիտասարդները տեղեկանալով պատուական «Մշակ» լրագրիդ մէջեցով իրենց համարիւն եղբարց՝ Ցանկանալորի սովի ճգնաժամի մասին, մի ընկերական խումբ կազմեցին գլխաւորաբար աշխատութեամբ պ. Գրիգոր Աբիսիմովեանցի և պ. Լուսեղէն Նալբանդեանցի և ներկայ փետրվար ամսի 29-ին թատրոնական մի ներկայացումն տուին յոգուտ վիսի սովատանջների։ Ներկայացումն բաւական գեղեցիկ անցաւ և մեծ գոհութիւն հանդիսականաց, և պէտք է ասել, այս առաջին անգամն է, որ Արմենական պէս մի գաւառական քաղաքում տեղի է ունենում մայրենի լեզուով թատրոնական ներկայացումն, որից գոյացած 108 բուրլիից հանելով 34 բուրլի թատրոնական ծախսը, մնացած 74 բուրլին անա ուղարկում եմ ձեզ, խնդրելով, որ բարեհաճէք, պ. խմբագիր, հասցնել սոյն անձամբ գումարը ըստ պատկանելոյն, և եթէ կարելի է՝ տպագրել այս իմ կարճաւոտ նամակը «Մշակի» էջերի մէջ՝ ի միամտութիւն և՝ ի խրախոյս աշխատաւորաց, որոնք հաւատացին յանձնել իւրեանց այս փոքրիկ ձեզ հասցնելու համար։

Օգոստոս քահանայ Հայրունի

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 27 մարտի

«Մշակ» պատուական լրագրի մէջեցաւ կը փութամ յայտնել, որ այսօր մեծ. պ. Աղէքսանդր Լազարէ Թասիրեանցից յոգուտ Վասպուրականի սովեալներուն ստացաց հինգ հարիւր բուրլի նուէր մը, որը պ. Նուրիատոյի ցանկութեան համեմատ հեռագրաբ ամբողջապէս Կ. Պոլիս մեր առաւարական տան թղթակցին փոխադրելով կարգադրած եմ ուղղակի վան Խրիման սրբազանին հասցնելու։

(Ընդունեցէք և այլն,

Վահրամ Մուխանանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՍԱԼԵԱՆԻՑ մեզ գրում են, որ այս տարվայ երկարատև և սաստիկ ձմեռը այդ կողմերում մեծամեծ վնասների պատճառ է դարձել։ Առաւելապէս վնասվել է Մուղանի անապատի Շահնէվան կոչված վրանարակ ցեղը, որոնց ապրուստի գլխաւոր աղբիւրն է անասնապահութիւնը։ Անասունները ցրտից մեծ մասամբ կոտորվել են և այժմ 100 ոչխարից 30 չէ մնացել, նոյնպէս վընասվել են միւս ջորբատանները, մանաւանդ ուղտերը։

—

Մեզ գրում են ՍԱԼԵԱՆԻՑ, որ կենսական անհրաժեշտ պիտոյքները սաստիկ թանգացել են. ցորենի մէկ խալվարը (25 պուդ) որ առաջ արժէր 10—15 բուրլ, այժմ արժէ 52 բ., գարին, որ առաջ արժէր 5—7 բ., այժմ արժէ 40 բ., գարմանի մի սայլը (20 պուդ), որ առաջ արժէր 1—2 բ., այժմ արժէ 20 բ., մսի ֆունտը, որ երբէք 4 կոպէկից աւելի չէ եղած, այժմ արժէ 12 կ., իւղի ֆունտը, որ 15 կ. արժէր, այժմ արժէ 60 կ., դրանց համեմատ թանգացել է և վաճառքը. ժողովուրդը բաւականանում է Մուղանի անապատից բերած եղէգներով, որ վաճառքի տեղ է գործածում։

—

Մենք դարձեալ ստացանք Շամախուց մի պատասխան «Մշակի» 36 համարում տպված «Մի հայաւետարանականի» նկատողութիւնների դէմ. թէև յիշեալ պատասխանի մէջ մենք գտնում ենք մի քանի իրաւացի կէտեր, բայց որպէս առաջուց յայտնած էինք, աւելի բարւոք ենք համարում, որ այդ բանակռիվն վերջ տրվի, և այս պատճառով նամակը թողեցինք անտիպ։

—

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են. մինչեւ ուրիշ քաղաքների և մինչև անգամ անչան գիւղերի դրամատէրերը փող են հաւաքում և հոգաբարձութիւններ են կազմում իրանց աղքատ հարեւաններին օգնելու և հացը նրանց էժան գնով հայթայթելու համար,—ընդհանրապէս Մեղրիի անգութ դրամատէրերը առաջուց գիտենալով հացի օրըստօրէ թանգանալը, աշխատեցին հաւաքել տեղային բոլոր ցորենները, որ այժմ կարդանան աւելի թանդ գնով վաճառել աղքատներին։ Ցորենի պուդը արժէ 4 բուրլ. բայց բազմաթիւ ընտանիքներ կան, որ այդ չորս բուրլին ևս չեն գտնում և ստիպված են իրանց հողերը ամենի։

—Ա՛խ, ասանակներ, ասանակներ, դուք երբ պիտի խելքի գաք։—Նա կրկին դառնալով դէպի պ. Սալմանը, շարունակեց.—Մարդ էլ իր ձեռքով իր աչքի լոյսը կը խաւարացնէ, դրանք (գիւղացիները) այդպէս են։ Ես այսօր լսեցի, ճչմարիտն ասեմ ձեզ, մաղերս բիզբիզ կանգնեցան։ Մենք աշխատում ենք, որ դրանք զարգ ունենան, ուսում առնեն, աչքերը բացվի, կոյր չը մնան, աշխարհի չարն ու բարին ճանաչեն, բայց դրանք չեն հասկանում, էլի իրանց «էշն են քշում»...

«Մենք աշխատում ենք»... կրկնեց իր մտքում պ. Սալմանը, բայց ովքեր են այդ «մենքը», որ առանձին կերպով չեշտուց Թոմաս Լիֆենդին։

Նա շարունակեց.

—Ես հոգով չափ ուրախացայ, երբ լսեցի ձեր դիտաւորութիւնների մասին, պ. Դուզուկիան, և այս պատճառով դիմեցի ձեզ յայտնելու իմ առանձին շնորհակալութիւնը։ Մեր ժողովուրդը խաւարի մէջն է. պէտք է դուրս բերել նրան դէպի լոյս աշխարհ։ Դպրոցը միայն կը փրկէ նրան։ Մի քանի օր առաջ պատահած անկարգութիւնները թող չը վնասեցնեն ձեզ. ամեն բարի գործի սկիզբը դառնութիւնքա է լինում։ Դուք իմ մէջ, որպէս ձեր հարեւանցի մէջ, կը գտնէք համակրութիւն և ձեռնտուութիւն։ Ընդունեցէք իմ փոքրիկ ծառայութիւնները։ Ես այսօր մի գործով գնում եմ մերձակայ գիւղը, առաւօտեան կը վերադառնամ, և ինքս անձամբ կը կանչեմ, բայց անել կը տամ գպրոցների հիմքը։ Այսուհետ ոչ ոք չի գտնվի, որ Թոմաս Լիֆենդուն ընդդիմութիւն գործէ։

—Շնորհակալ եմ, Լիֆենդի, պատասխանեց պ. Սալմանը,—դուք այնքան շատ զրամունքներ ունէք, որ ես չէի ցանկանայ խլել ձեր թանգագին ժամանակը։

—Այդ ոչինչ, ասաց կատպատուն մի առանձին բաւականութեամբ,—բարի գործի համար ես միշտ ժամանակ ունեմ։

Նա ձեռք տուեց երկու երիտասարդներին և հեռացաւ։

—Լիրը... խարերայ... ասաց նրա ետևից Վարդանը։

—Կարելի է օգուտ քաղել այս տեսակ մարդերից, պատասխանեց պ. Սալմանը։

—Միթէ հաւատում էք նրա խօսքերին։ Ով գիտէ, ինչ սատանայական նպատակներ ունի։

Երկու երիտասարդները արդէն հասել էին տէր Մարտիքի տանը և ծեռում էին դուռը։

—Սիրուն ասեցիր... գոյն-գոյն թերթ... լաւ յուլուներ... լսելի եղաւ կաղ չարչու ձայնը, որ անց էր կենում միւս փողոցից։

—Վարդան, թողնենք այսօր տէրտէրի մօտ զընալը, ասաց նրան պ. Սալմանը։

—Ինչու, հարցրեց Վարդանը։

—Ինձ պէտք այդ չարչուց մի քանի բաներ զընել...

Վարդանը սկսեց ծիծաղել իր ընկերի անտեղի ցանկութեան վրա։

—Եկէք, ուրիշ բան կա՞... ասաց նրան պ. Սալմանը, այնպիսի մի եղանակով, որ Վարդանը չէր կարող կասկածել նրա առաջարկութեան կարևորութեան վրա։

Երկու երիտասարդները թողեցին տէրտէրի տունը, անցան միւս փողոցը և հեռուից սկսեցին հետևել չարչուն։ Նրա ետևից ընկած էին մի խումբ գիւղական երեխաներ և գոռում էին.—Մեզ մատաք տուր, մատաք տուր։ Նա հանեց մի կոտր մատաք և բաժանեց երեխաներին։

—Ես այդ մարդուն մի չարաթ առաջ տեսայ, այսպէս մաս էր գալի վանայ գիւղորայքում, ասաց մի գիւղացի իր մօտ կանգնած հարևանին։

—Այդ չարչիները ամեն տեղ թափառում են, պատասխանեց հարևանը,—բայց ինչ սարսափելի դէմք ունի, հայիր, Գրիգոր, ես չէի ցանկանայ դրան գիշերով տեսնել, կարծես, չար սատանայ լինի։

Կաղ չարչին պտտելով բոլոր փողոցները, երբեմն կանգնում էին նրան այս և այն տունը մի բան գնելու և ամբողջ ժամերով պառում էին, իսկ երբեմն հէնց փողոցի վրա բաց էին անել տուին նրա արկղը, և գիւղացի կիներները հաւաքված նրա չուրջը, երկար ու բարակ բազար էին անում։ Այսպէս, մինչև երեկոյ նա հազիւ կարողացաւ վերջացնել իր առևտուրը, և մուքը պառել էր արդէն, երբ դուրս եկաւ գիւղից։ Նա թողեց ուղիղ ճանապարհը, որ տանում էր դէպի հարևան գիւղը, և սկսեց գիմել դէպի մի խրամ, որ բաւական խորն էր ընկած գարնան հեղեղներից, իսկ այժմ ցամաքել էր։ Նրա ընթացքի մէջ այժմ կարելի էր տեսնել մի նոր փոփոխութիւն. քայլերը դանդաղ էին որպէս առաջ, որովհետև, ինչպէս երևում էր, չալված արկղը սաստիկ ծանր էր։ Բայց այդ մարդը ամենին կաղ չէր, թէև ցեղեկով այնպէս էր ձևացնում։ Նա սկսեց իջնել խրամի մէջ։ Այնտեղ ցած դրեց իր բեռը, և ձախ ձեռքի երկու մատը շրթունքի վրա դնելով, խորհրդաւոր ձայնով մի քանի անգամ չ՚ացրուց։ (Զեռքի մնացած մատները կտրած էին)։ Քանի բոպէից յետոյ խրամի մէջ յայտնվեցան Վարդանը և պ. Սալմանը։ Վերջինը գրկեց չարչիին և երկար չէին բաժանվում միմեանցից։

—Հիմա նստենք, ասաց պ. Սալմանը,—պատմիր, լաւ առևտուր ունեցար...

—Շատ լաւ... պատասխանեց չարչին ուրախ ձայնով։—Վասպուրականի մեծ մասը հեղեղցի իմ վաճառքներով...

—Ի հարկէ, առանց փողի...

—Առանց փողի... ես իմ վաճառքները ձրի էի բաժանում...

Վարդանը ապշած լսում էր երկու բարեկամների խօսակցութիւնը և ոչինչ չէր հասկանում։

—Հիմա հասկանում ես, ասաց նրան պ. Սալմանը,—որ իմ բարեկամի արկղը ձեռնածուի արկղիկի նման երկու յատակ ունի։

—Հնազանդիր է գիտենալ, թէ ֆոկուսի գլխաւոր յատակի մէջ ինչ էր թաքցրած, հարցրեց Վարդանը։

—Ցէ՛նքեր...

Վարդանը այժմ հասկացաւ. չարչու ով և ինչ մարդ լինելը, որովհետև մի քանի օր առաջ նրա մասին լսել էր պ. Սալմանից, և ինքը նոյնպէս գրկեց նրան։

Այդ մարդը Մէլիք-Մանասուն էր։

(Կը շարունակվի)